



# ԵՐԲ ՉԻ ՄՆՈՒՄ ԵԼԵ ՈՒ ՃԱՐ ՄԱՅԻՍ 28

Ազատութիւն սիրող ազգը չէր կրնար աւելի երկար մնալ օտարին լուծին տակ: Ուստի երկաթեայ կամքի ուժով եւ յստակ նպատակով ճամբայ ելաւ ան:

Հայ ժողովուրդին առաջին անկախութիւնը ծնաւ Ցեղասպանութենէն կարճ շրջան մը վերջ, երբ տակաւին կը սգար իր մէկ ու կէս միլիոն նահատակները, երբ թշնամին ոտք կոխել փորձեց Հայաստանի մնացած բաժնին մէջ: Հայ ժողովուրդը կ'ամ պիտի յանձնուեր օսմանցիին, կամ ալ պիտի պայքարեր ազատութեան համար, արեան գնով: Ան նախընտրեց դիմադրել, պայքարիլ եւ ստրուկ չապրիլ:

Հայ ժողովուրդը իր բոլոր ուժերը համախմբեց եւ ուղղուեցաւ կռուի դաշտ, առիւծասիրտ հերոս Արամ Մանուկեանին եւ իր զինակից ընկերներուն ղեկավարութեամբ:

Այսօր, 105 տարի վերջ, մեր պարտքն է արժանաւոր ժառանգորդները ըլլալ պանծալի այն յաղթանակին՝ ամուր պահելով Հայաստան-Արցախ-Սփիւռք միասնութիւնը:

Պայքարի մեր ճամբան երկար է եւ ոչ մէկ դժուարութիւն ետ կրնայ մղել մեզ այդ ճամբայէն:


Եկէ՛ք զինուի՛նք մեր հերոսներուն կամքի ուժով, եւ իրենց արեան գնով ձեռք բերուած սուրբ ազատութիւնը պահելու համար շարունակենք միասնաբար պայքարիլ. «Մերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչէք Սարդարապատից»:



*«Հայէ՛ր, հասեր է ժամը, երբ բոլորս միասին՝ ձեր թէ երիտասարդ, կին թէ տղամարդ, պարտաւոր ենք հրապարակ իջնել, դէպի ճակատ վազել եւ բոլորանուէր զոհաբերութեան գնով փրկել Ազգն ու Հայրենիքը: Բոլորիս միասնական կամքով միայն կրնանք ազատիլ մահուան մղձաւանջէն, մահասփիւռ նենգ թշնամիին եայթաղանէն: Կարգապահ, հնազանդ եւ հերոսական կեցուածքով բոլորդ դէպի սրբազան գործ, դէպի անհաւասար պատերազմ»:*

Արամ Մանուկեան

ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵԱՆ  
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՇՈՇԵԱՆ




Դեմքերը ի՞նչ կ'ըսեն: Ընտրե՛ր ճիշդ պատասխանները:


Տխուր - ուրախ - զայրացած  
- վստահ - վախցած



Իրաքանչիւր տողէն ընտրե՛ր տարբեր պատկերը եւ դուրս հանե՛ր զանիկա:




Գտի՛ր տարբերութիւնները:



Գունաւորե՛ր հետեւեալ պատկերը:

Մայիս 28

1918



ՍԱՐԴԱՐԱԴԱՏ

# ՍՊԻՏԱԿԱԹԵՒՆ ՈՒ ՈՐՍՈՐԴԸ

Երկա՛ր տարիներ առաջ օր մը Հնդկաստանի մէջ, որսորդ մը եկաւ ու հսկայ ծառի մը մօտ կեցաւ: Այդ ծառը այնքա՛ն մեծ էր, այնքա՛ն մեծ, որ ճիւղերը գետին հասած էին:

«Օ՛հ, ի՛նչ յարմար առիթ է», ըսաւ որսորդը, երբ տեսաւ այդ հսկայ ծառը: «Այսօր որքա՛ն շատ թռչուններ պիտի որսամ»:

Որսորդը իր ցանցը նետեց ծառին վրայ: Ցանցին թելերը անցան հսկայ ճիւղերուն եւ ան աներեւելի դարձաւ: Յետոյ խելացի որսորդը բրինձի հատիկներ թափեց բոլոր տերեւներուն վրայ, որպէս ծուղակ խեղճ թռչուններուն: Բրինձին հատիկները նոյնիսկ հեռուն յստակ կ'երեւէին:

Ճիշդ այդ ժամանակ Սպիտակաթելը՝ որ աղանիներուն արքան էր, երկնքին մէջ կը թռեր իր բոլոր աղանիներուն հետ: Միև մօտեցան, Սպիտակաթելը տեսաւ այդ ծառը, որ որսորդը բրինձի հատիկներով լեցուցած էր: «Վա՛յ», ըսաւ ան դառնալով ծառին շուրջ: «Այսօր կարծես մեր բախտաւոր օրն է: Նայեցէ՛ք այդ ծառին վրայ թափած բրինձի հատիկներուն»: Ան ծառին մօտ իջաւ: Աղանիներն ալ հետեւեցան անոր:

Բայց օ՛հ, ո՛չ: Հագիւ թէ բոլորը վայրէջք կատարեցին, իւրաքանչիւրը ինկաւ թակարդը:

Այս տեսնելով, որսորդին ուրախութիւնը անսահման եղաւ: «Ի՛նչ լաւ» ըսաւ անիկա: «Նայեցէ՛ք այդ բոլոր աղանիներուն: Այսօր շատ համեղ եւ առատ ընթրիք մը պիտի ունենամ»:

Աղանիները լաց ու կոծ ըրին: «Այս է մեր վերջը: Պիտի մեռնի՛նք» բոլորը միասին բացագանչեցին:

«Սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք», ըսաւ Սպիտակաթելը: «Մեզի համար ազատելու ձեւ կայ, սակայն պէտք է միասին աշխատինք»:

«Ի՛նչ կրնանք ընել», գոռաց աղանիներէն մէկը:

«Որսորդը հոս է, շա՛տ մօտ է», ըսաւ ուրիշ մը:



«Վստահ որ մէկ հոգի առանձին չի կրնար բարձրացնել այս ցանցը», ըսաւ Սպիտակաթելը, «Որովհետեւ անիկա չափազանց մեծ է եւ ծանր»:

«Այո՛, այո՛ գիտենք», գոչեցին աղանիները:

«Բայց եթէ բոլորս միասին միեւնոյն ուղղութեամբ աշխատինք այս ցանցը կրնանք հեռացնել մեր վրայէն ու այստեղէն հեռու թռչիլ դէպի քաղաք, ուր մուկ մը կը ճանչնամ: Ան սիրելի բարեկամ մըն է ու վստահ եմ,

որ կ'օգնէ մեզի՝ ազատելու այս ցանցէն եւ իր սուր ակռաներով կը կրծէ անոր թելերը»:

«Տեսէ՛ք, որսորդը եկաւ», աղանի մը լալով գոչեց:

«Բոլորը միասին 1, 2, 3... հիմա՛», բարձրաձայն ըսաւ Սպիտակաթելը, ու իրապէս բոլոր աղանիները միասնաբար դէպի վեր բարձրացան: Անոնք ցանցն ալ իրենց հետ վեր հանեցին:

Որսորդը չէր հաւատար իր աչքերուն: Բոլոր թռչունները բարձրօրէն կը թռէին, իրենց հետ ալ՝ ցանցը:

Սպիտակաթելն ու աղանիները ցանցին հետ միասին կը թռէին անտառներուն վրայէն, դէպի քաղաք: Այնտեղ Սպիտակաթելը գտաւ իր ընկերոջ՝ մկնիկին եւ իրապէս ալ մկնիկը ազատեց զանոնք:

Այսպիսով՝ բարի աղանիները ազատեցան եւ սորվեցան, որ հաւաքական աշխատանքը կրնայ նոյնիսկ իրենց կեանքերը փրկել:

# ՀԵՏԱԲԵՐԲՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՈՅԱՄՈՂԷՉՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

1. Հոյամողեզները ապրած են միլիոնաւոր տարիներ առաջ, նախքան մարդոց գոյութիւնը:

2. Որոշ հոյամողեզներ հաւերու չափ փոքր էին, իսկ ուրիշներ՝ շէնքերու չափ հսկայ:

3. Անոնք հաւկիթ կ'ածէին, ինչպէս այսօր թռչուններն ու սողունները:

4. Հոյամողեզները այժմ անհետացած են: Անոնք այլեւ բացարձակապէս գոյութիւն չունին երկրի վրայ:



5. Բրածոները հոյամողեզներուն մնացորդներն են, որոնք պահպանուած են միլիոնաւոր տարիներու ընթացքին:

6. «Dinosaur» անգլերէն բառը յառաջացած է յունարէն երկու բառերէ, որ կը նշանակէ «սարսափելի մողեզ»:

7. Հոյամողեզներու մարմնի ջերմաստիճանը կը փոխուէր շրջակայ միջավայրի ջերմաստիճանին հետ:

8. Անոնք ունէին շատ սուր ատամներ եւ ճանկեր, որոնք կ'օգնէին իրենց որսալու, ուտելիք գտնելու եւ պաշտպանուելու: